ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ՝** **Ֆելիքս Պետրոսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝** **Էդվարդ Ափոյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Օնիկ Ախվերդյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավար՝** **Էդգար Հովհաննիսյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Արբակ Եղիազարյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Սամսոն Սարգսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Գոռ Հովհաննիսյանի**
- **Կառուցվածքային ստորաբաժանումների Ղեկավարների**

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի խորհրդի 2026 թվականի հունիսի 29–ի Նիստի օրակարգը հաստատելու մասին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզպետին փոխարինող Արամ Գրիգորյանը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2026 թվականի հունիսի 29-ի նիստի օրակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզպետին փոխարինող Արամ Գրիգորյանի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2026 թվականի հունիսի 29-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N647–Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12-րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը
որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2026 թվականի հունիսի 29-ի նիստի օրակարգը:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2026 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը զեկուցեց հետևյալը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի նոյեմբերի 28-ի N3273-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2026 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2026 թվականի փետրվարի 24-ի ՈՄՈ/111-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2026 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և լրացված հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ **http://armavir.mtad.am/:**

Իրականացված հսկողության արդյունքում հաշվետու ժամանակահատվածում խախտումներ գրեթե չեն արձանագրվել, իսկ արձանագրված թերություններն ամբողջությամբ վերացված են, հատկանշական են Արաքս համայնքի առավելությունները:

1. Արաքսը մարզի միակ համայնքն է, որ մարզպետի աշխատակազմ է առաքում նաև համայնքի ղեկավարի կարգադրությունները, չնայած որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն (33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետ) աշխատակազմի քարտուղարն ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.
2. Աշխատակցի անաշխատունակության նպաստի տրամադրումը «Ժամանակավոր անաշխատութնակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավական ակտով ձևակերպումը (համայնքի ղեկավարի կարգադրություն).
3. Գնումների գործընթացն առանց պատվիրակման (աութսորս) իրականացվում է աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից:

Զեկույցի ավարտին տիկին Հարությունյանը հավելեց,որ աշխատանքային խմբի կողմից ցուցաբերվել է մեթոդական աջակցություն, մատուցվել է համապատասխան խորհրդատվություն և տրվել են պարզաբանումներ տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես սեփական, այնպես էլ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2026 թվականի հունիսի 26-ի դրությամբ բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացված աշխատանքների ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դոտացիաներ տրամադրելու մասին զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանը, ներկայացնելով հետևյալ վերլուծությունը՝

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 9 993 551,4 հազ.դրամ՝ 2025թ-ի նույն ժամանակահատվածում պլանավորված 9 008 347.3 հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 985 204,2 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 8 832 375,8 հազ. դրամ, 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 8 472 690,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 359 685,4 հազ. դրամով, կատարվել է 88,4%-ով, նախորդ տարվա 94,1%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 3 132 229,3 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 2 364 171,4հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 768 057,9 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 2 920 747,3 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 2 524 922,9 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 395 824,5 հազ. դրամով, կատարվել է 93,2%-ով, նախորդ տարվա 106,8%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 589 888,9 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 478 588,5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 111 300,4 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 497 476,8 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 430 137,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 67339,4 հազ. դրամով, կատարվել է 84,3%-ով, նախորդ տարվա 89,9%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 919 632,6 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 952 990,1 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 33 357,5 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 710 017,7 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 854 296,7 հազ. դրամի համեմատ, պակաս է

հավաքագրվել 144 279,0 հազ. դրամով, կատարվել է 77,2%-ով, նախորդ տարվա 89,6%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 206 664,8 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 167 209,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 39 455,4 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 321 688,9 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 275 820,8 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 45 868,1 հազ. դրամով, կատարվել է 155,7%-ով, նախորդ տարվա 165,0 %-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 26 323,9 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 41 651,0 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 15 327,1 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 32 653,9 հազ. դրամ, 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված. 40 994,5 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 8 340,6 հազ. դրամով, կատարվել է 124,0%-ով, նախորդ տարվա 98,4%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 96 510,2 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 80 660,6 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 15 849,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026 թվականի դրությամբ կազմել է 88 689,2 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 80 720,2 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 7 969,0 հազ. դրամով, կատարվել է 91,9%-ով, նախորդ տարվա 100,1%-ի համեմատ:

2026թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 544 892,1 հազ.դրամ՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 516 378,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 28 513,8 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 26.06.2026թվականի դրությամբ կազմել է 500 085,2 հազ. դրամ , 2025թ-ի 1-ին կիսամյակին հավաքագրված 507 677,5 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 7 592,4 հազ. դրամով, կատարվել է 91,8%-ով, նախորդ տարվա 98,3%-ի համեմատ:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում քաղաքաշինության բնագավառում իրականացված մշտադիտարկման արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ Դավիթ Ավետիսյանը: Վերջինս ներկայացրեց՝

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2026 թվականի ընթացքում իրականացվել են մշտադիտարկման գործառույթներ 2023-2025թթ.. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող 72 օբյեկտներում, մասնավորապես՝ 2023 թվականի՝ 6 օբյեկտ, 2024 թվականի՝ 12 օբյեկտ, 2025 թվականի՝ 54 օբյեկտ:

Մշտադիտարկում է իրականացվել նաև ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ մարզում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Քաղաքաշինության կոմիտեի կողմից իրականացվող դպրոցաշինության, մանկապարտեզների և մարզադպրոցի կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև ճանապարհաշինության ոլորտում Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի կողմից իրականցվող շինարարական աշխատանքներում, մասնավորապես՝ թվով 28 դպրոցներում, թվով 6 մանկապարտեզներում, թվով 2 մարզադպրոցում և թվով 4 ճանապարհներում:

Հաշվտու ժամանակահատվածում վարչության կողմից կատարվել է **Արմավիր համայնքի** Արմավիր քաղաքի և Լենուղի, Խանջյան, Հացիկ, Նորավան, Այգեվան գյուղերում թվով 8 մանկապարտեզների, 4 դպրոցների, 2 բժշկական ամբուլատորիաների և մարզադպրոցի, **Մեծամոր համայնքի** Մրգաշատ,Երասխահուն, Հայկավան, Նոր Արտագերս, Ամասիա, Նոր Կեսարիա, Ալաշկերտ, Նորապատ, Գետաշեն, Շենավան, Վարդանաշեն,Տանձուտ, գյուղերում թվով 2 մանկապարտեզների, 8 դպրոցների և 2 բժշկական ամբուլատորիաների, **Վաղարշապատ համայնքի** Էջմիածին քաղաքի և Գեղակերտ,Ամբերդ, Հովտամեջ ,Աղավնատան, Դողս Ծաղկունք գյուղերում թվով 4 մանկապարտեզների և 8 դպրոցների, **Արաքս համայնքի** Ջրառատ, Ջրարբի, Մեծամոր, Գայ գյուղերում թվով 3 դպրոցների և 2 բժշկական ամբուլատորիաների, **Փարաքար համայնքի** Այգեկ,Նորակերտ, Թաիրով, Փարաքար գյուղերում թվով 3 դպրոցների, 2 բժշկական ամբուլատորիաների և մարզադպրոցի, **Բաղրամյան համայնքի** Վանանդ և Քարակերտ գյուղերում թվով 2 դպրոցների վերանորոգման, ուժեղացման և կառուցման աշխատանքների մշտադիտարկում ու կատարվող աշխատանքների որակի վերահսկում:

2025թ. մեկնարկած և ընթացքի մեջ գտնվող *<u>հրատապ</u>* ծրագրերի վերաբերյալ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Արևելյան նորակառույց թաղամասով անցնող անձրևատար կոլեկտորի 1860 գծամետր հատվածի վերակառուցման և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայկ Դանոյան, Եղիշե Չարենցի փողոցներում ու Էջմիածին-Արտիմետ խճուղում կոյուղագծերի փոխարինման աշխատանքների վերահսկման աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ այս պահին մարզում իրականցվող

Տ-3-37,/Մ-5/-Մերձավան-Այգեկ-/Մ-5/ տեղական նշանակության ավտոճանապարհի 10,2 կմ հատվածի ,

Հ-18,/Մ-5/-Վանանդ-/Մ-9/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 11,1 կմ հատվածի ,

Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 4,85 կմ հատվածի,

Տ-3-54, /Տ-3-18/ -Արտաշար- /Տ-3-53/ տեղական նշանակության ավտոճանապարհի 3,3 կմ հատվածի հիմնանորոգման ճանապարհաշինական ծրագրերերի մշտադիտարկում և որակի վերասկման աշխատանքներ:

Կատարվել են 107 այցելություններ սուբվենցիոն ծարագրերով իրականացվող շինարարական օբյեկտներում: թվով 27 օբյեկտներում արձանագրվել են 65 թերություններ, որոնք հետագայում աշխատանքային ընթացակարգով վերացվել են:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան աշխատակիցների հետ համատեղ մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել ավարտված և ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերով իրականացվող թվով 27 շինարարական օբյեկտներում, համապատասխան ֆինանսավորման նպատակով:

Վարչության մշտական հսկողության տակ է գտնվել 2026թ. ընթացքում իրականացվող Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների, ընդհանուր՝ 387,3կմ-ից 175,5 կմ ամառային /փոսալցման, աղբի, օտար առարկաների հեռացման, կողնակների հարթեցման/ և 184,31 կմ ձմեռային պահպանության աշխատանքները:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատակիցների կողմից գույքագրվել են ՀՀ Արմավիրի մարզով անցնող միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ճանապարհամերձ հատվածները, որի արդյունքում արձանագրվել են ճանապարհներին կից հատվածներում քաղաքացիների կողմից կուտակված շինարարական և կենցաղային աղբ, կամ այլ տեղից տեղափոխված հողային գրունտներ, որի վերաբերյալ համապատասխան գրություն է ուղարկվել համայնքներ արձանագրված թերթուրթյունները վերացնելու համար:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր և Փարաքար համայնքների բնակավայրերի համար տրվել են

եզրակացություններ՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ/**ընդամենը 37.5 հա**/:

Դ. Ավետիսյանը խոսքն ամփոփեց, տեղեկացնելով, որ վերը նշված շինարարական օբյեկտներում արձանագրված բոլոր թերությունները ներկայացվել են պատվիրատուներին և շինարարական կազմակերպություններին: Վարչության վերահսկման տիրույթում է, որպեսզի օր առաջ կատարվեն արձանագրված թերությունների վերացման բոլոր աշխատանքները:

Օրակարգային հարցերի քննարկման ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզպետին փոխարինող Արամ Գրիգորյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

07.07.2026

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության,
փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝
Աննա Միքայելյան